

Արտադասարանային պարապմունքների հավասար մատչելիություն հաշմանդամ աշակերտների համար

Մայիս 2014թ., Հրատարակչություն #CM45.10

1. Հաշմանդամ աշակերտները հավասար
հնարավորությունների իրավունք ունեն՝ մասնակցելու
արտադասարանային պարապմունքներին:

Այո: Հաշմանդամ աշակերտները՝ Վերականգնման մասին օրենքի
(Rehabilitation Act) 504 հոդվածի և Հաշմանդամ ամերիկացիների մասին
օրենքի (American with Disabilities Act) II վերնագրի համաձայն իրավունք ունեն
հավասար հնարավորությունների պայմաններում մասնակցել իրենց դպրոցի
արտադասարանային պարապմունքներին:^{1, 2}

¹ Թեև այս ամփոփաթեթը կենտրոնանում է տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտների
իրավունքների վրա, ավագ դպրոցի աշակերտները նույնպես հավասար մատչելիության իրավունք ունեն
մասնակցելու արտադասարանային պարապմունքներին:

² 34 Դաշնային Կարգավորման Օրենքի (CFR, Code of Federal Regulations) հոդվածներ 104.4, 104.37, 42
Միացյալ Նահանգների Օրենսգրքի (U.S.C., United States Code) հոդվածներ 12101, Միացյալ Նահանգների
Կրթության Նախարարություն (U.S. Department of Education), Քաղաքացիական Իրավունքների Գրասենյակ
(OCR, Office of Civil Rights): (25 հունվարի, 2013թ.): Հարգարժան գործընկերոջ նամակ, արտադասարանային

2. Արդյոք հաշմանդամ աշակերտները ներկայումս հնարավորություններ ունեն մասնակցելու դպրոցի մարմնամարզական ծրագրերին, որոնք հավասար են ոչ հաշմանդամ երեխաների ծրագրերին:

2010թ. Միացյալ Նահանգների կառավարության վերահսկողական գրասենյակի (GAO, United States Government Accountability Office) կողմից կատարված և ներկայացված հետազոտական զեկույցում բացահայտվում է, որ չնայած այն հանգամանքին, որ դաշնային օրենքները պահանջում են, որ նահանգները և դպրոցները հավասար մատչելիություն տրամադրեն արտադասարանային պարապմունքներում, հաշմանդամ երեխաների և երիտասարդների համար ֆիզիկական ակտիվության հնարավորությունները սահմանափակ են: Այս զեկույցից պարզ է դարձել, որ անվճար տարրական և միջնակարգ դպրոցներում հաշմանդամ աշակերտների՝ թեթև աթլետիկայի պարապմունքներին մասնակցության աստիճանն ավելի ցածր է եղել, քան ոչ հաշմանդամ աշակերտներինը:³

պարապմունքներ: Մեջբերված OCR նամակներից: Հասանելի լինել տվյալների շտեմարանին՝ <http://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201301-504.pdf>:

³ Միացյալ Նահանգների կառավարության վերահսկողական գրասենյակ (GAO, U.S. Government Accountability Office): (Հունիս, 2010թ.) *Հաշմանդամ աշակերտներ. լրացուցիչ տեղեկությունները և ուղղորդումը կարող են նպաստել ֆիզիկական կրթության և մարմնամարզության ծրագրերում մասնակցության հնարավորությունների մեծացմանը (Students with Disabilities: More information and guidance could improve opportunities in physical education and athletics.)* (Հրատարակչություն համար GAO 10-1519)՝ մեջբերված GAO Ջեկույցներից: Հասանելիության տվյալների շտեմարան՝ <http://www.gao.gov/assets/310/305770.pdf>:

3. Օգնության ի՞նչ մատչելի ձևեր կան կրթական գործակալությունների համար, որոնք վերաբերում են հաշմանդամ աշակերտներին՝ դպրոցական թեթև աթլետիկայի պարապմունքներին մասնակցելու հնարավորություններ տրամադրելուն:

2011թ. Միացյալ Նահանգների կրթության նախարարությունը (GAO, United States Department of Education) աշակցություն տրամադրեց, որը վերաբերում էր հաշմանդամ աշակերտներին՝ ֆիզիկական կրթության և մարմնամարզության ծրագրերում ներառելուն: Այս փաստաթուղթը կազմվել է՝ կրթական գործակալություններին գործնական առաջարկներ և ռեսուրսների քննարկման հնարավորություններ ընձեռելու և դյուրացնելու համար տեղեկատվության համօգտագործումն այս կարևոր թեմայի շուրջ՝ նահանգների և դպրոցների միջև:⁴ 2013թ. Միացյալ Նահանգների կրթության նախարարության Քաղաքացիական իրավունքների գրասենյակը (OCR, Office of Civil Rights) դպրոցների իրավական պատասխանատվության շուրջ լրացուցիչ, մանրամասն առաջարկներ տրամադրեց՝ **հաշմանդամ** աշակերտներին հավասար արտադասարանային հնարավորություններ ընձեռելու համար:⁵

4. Ո՞ր գործակալությունն է հարկադրաբար կիրառում հաշմանդամ աշակերտներին՝ արտադասարանային

⁴ ԱՄՆ կրթության նախարարություն (օգոստոս, 2011թ.): *Հաշմանդամ երեխաների և երիտասարդների համար ֆիզիկական կրթության և արտադասարանային մարմնամարզության ծրագրերում մասնակցության հավասար հնարավորությունների ստեղծումը* (*Creating Equal Opportunities for Children and Youth with Disabilities to Participate in Physical Education and Extracurricular Athletics.*) Հասանելիության տվյալների շտեմարան՝ <http://www2.ed.gov/policy/speced/guid/idea/equal-pe.pdf>.

⁵ ԱՄՆ կրթության նախարարություն, OCR. (25 հունվարի, 2013թ.) Հարցաբան գործընկերոջ նամակ 2013թ. և նամակ Ֆրանցիսկո Նեգրոն Կրոսերին (Francisco Negron, Jr.), 16 դեկտեմբերի, 2013թ.: Հասանելիության տվյալների շտեմարան և http://chinniandmeuser.com/uploads/3/2/7/4/3274563/december_2013_ocr_clarification_re_separate_athletic_opportunities.pdf.

պարապմունքներում հավասար հասանելիություն ունենալու իրավունքը:

Կրթության նախարարության Քաղաքացիական իրավունքների գրասենյակը (OCR, Office of Civil Rights) պատասխանատու է 1990թ. ընդունված՝ հաշմանդամ ամերիկացիների մասին օրենքի Հոդված 504-ը և II վերնագիրը հարկադրաբար կիրառել՝ կրթության կոնտեքստում: OCR-ը ուսումնասիրում է հաշմանդամության, ինչպես նաև ռասայի, գույնի, ազգային պատկանելության, սեռի կամ տարիքի հիմքով խտրականության բողոքները՝ այս և այլ օրենքների համաձայն: OCR-ի կողմից հարկադրաբար կիրառվող քաղաքացիական իրավունքների օրենքները տարածվում են բոլոր նահագների կրթական գործակալությունների, տարրական և միջնակարգ դպրոցների համակարգերի, կանոնադրությամբ գործող դպրոցների, քոլեջների և համալսարանների, մասնագիտական դպրոցների, մասնավոր դպրոցների, նահանգային մասնագիտական վերականգնողական գործակալությունների վրա, որոնք դաշնային ֆինանսական միջոցներ են ստանում: Ոլորտները, որոնք ներառում, բայց չեն սահմանափակվում այդքանով, հետևյալներն են՝ թեթև աթլետիկա և այլ արտադասարանային պարապմունքներ, ուսումնական ծրագրեր, աշակերտների վարմունք, կարգապահություն, հանգիստ և ֆիզիկական կրթություն:

5. Ինչո՞ւ է կարևոր մեծացնել հաշմանդամ աշակերտների՝ թեթև աթլետիկայի և այլ արտադասարանային պարապմունքներին մասնակցելու հնարավորությունները:

Միացյալ Նահանգների Կառավարության վերահսկողական գրասենյակը և Միացյալ Նահանգների կրթության գրասենյակը վերջերս ընդգծել են, որ մարմանմարզության արտադասարանային հնարավորությունների հասանելիությունը և դրանց մասնակցելը կարևոր առողջապահական և սոցիալական օգուտ են պարունակում բոլոր աշակերտների, հատկապես հաշմանդամ աշակերտների համար:⁶ Պետական միջդպրոցական

⁶ Հաշմանդամ երեխաների և երիտասարդների համար ֆիզիկական կրթության և արտադասարանային մարմնամարզության ծրագրերում մասնակցության հավասար

մարմնամարզական վարիչների միության (National Interscholastic Athletic Administrators Association) կողմից պատվիրված գեկույցի համաձայն, այն հաշմանդամ մարդիկ, ովքեր զբաղվում են որևէ սպորտաձևով, «ուսումնական մեջ հաջողության ավելի բարձր վարկանիշ ունեն, և ավելի հավանական է, որ ավարտեն ավագ դպրոցը և ընդունվեն քոլեջ և կարիերայում ավելի մեծ հաջողություն և ավելի շատ հնարավորություններ ունենան»:⁷

6. Մարմնամարզության ի՞նչ արտադասարանային պարապմունքներ են ընդգրկվում՝ հակախտրականության օրենքների գործողության շրջանակներում:

Արտադասարանային պարապմունքները, որոնք ընդգրկված են Հոդված 504-ի և Վերնագիր II-ի շրջանակներում, ներառում են՝ ակումբային, դպրոցի սահմաններում կատարվող, միջդպրոցական (օր.՝ առաջին կուրսեցիների, նախավերջին կուրսի ուսանողների, ավարտական կուրսի ուսանողների) մարմնամարզություն՝ բոլոր կրթական մակարդակներում:⁸ Բացի մարմնամարզությունից, արտադասարանային պարապմունքները ներառում, բայց չեն սահմանափակվում հանգստի, հատուկ հետաքրքրության խմբերի կամ ակումբների պարապմունքներով, որոնք հովանավորվում են հանրային կրթության գործակալության կողմից:⁹

7. Ո՞վ է պատասխանատու երաշխավորել, որ հաշմանդամ աշակերտներին հավասարապես հասանելի են ոչ

հնարավորությունների ստեղծումը (Creating Equal Opportunities for Children and Youth with Disabilities to Participate in Physical Education and Extracurricular Athletics).

Հասանելիության տվյալների շտեմարան՝ <http://www2.ed.gov/policy/speced/guid/idea/equal-pe.pdf>.

⁷ Active Policy Solutions Q և A՝ Հաշմանդամները սպորտում, Հարգարժան գործընկերոջ նամակ (Q and A: Disability in Sport Dear Colleague Letter), <http://www.niaaa.org/assets/OCR-Dear-Colleague-Q-and-A-2-15-13.pdf>.

⁸ OCR Հարգարժան գործընկերոջ նամակ.

<https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201301-504.pdf>.

⁹ 34 CFR հոդված 104.37(a)(2); 34 CFR հոդված 300.107.

ուսումնական և արտադասարանային պարապմունքները:

Ցանկացած ինքնուրույն իրավական միավոր կամ առանձին գործող մանկապարտեզ, տարրական, միջնակարգ կամ չափահասների կրթական ծրագիր կամ գործունեություն, որը դաշնային ֆինանսական աջակցություն է ստանում, պետք է քայլեր ձեռնարկի՝ ոչ ուսումնական և արտադասարանային ծառայություններ ու պարապմունքներ տրամադրելու, ներառյալ թեթև աթլետիկան՝ այնպիսի ձևով, որն անհրաժեշտ է՝ երաշխավորելու, որ հաշմանդամ անձինք հավասար հնարավորություններ ունեն՝ օգտվելու այդ ծառայություններից և մասնակցելու այդ պարապմունքներին:¹⁰

8. Դպրոցը կարող է ենթադրություններ կամ ընդհանրացումներ կատարել հաշմանդամության վերաբերյալ՝ որոշելու, թե արդյոք որոշակի հաշմանդամություն ունեցող աշակերտները կարող են մասնակցել թեթև աթլետիկայի կամ այլ արտադասարանային պարապմունքների:

Ոչ: Դպրոցը կամ որևէ ինքնուրույն գործող միավոր, որը կրթական ծրագիր է իրականացնում և դաշնային ֆինանսական աջակցություն է ստանում, չի կարող իր ծրագիրը կամ գործունեությունն իրականացնել՝ հիմնվելով ընդհանրացման, ենթադրությունների, նախապաշարումների կամ կարծրատիպերի վրա՝ հաշմանդամության մասին առհասարակ կամ հատկապես որոշակի հաշմանդամությունների մասին: Դպրոցական համայնքը ևս կարող է չհիմնվել ընդհանրացումների վրա առ այն, թե հաշմանդամության որոշակի տեսակ ունեցող աշակերտներն ինչի են ընդունակ. հաշմանդամության որոշակի տեսակ ունեցող աշակերտը կարող է ի վիճակի չլինել սպորտի որոշակի տեսակով զբաղվելու, բայց նույն հաշմանդամությունն ունեցող մեկ ուրիշ աշակերտ կարող է ի վիճակի լինել այդ սպորտով զբաղվելու:

¹⁰ 34 CFR հոդված 104.31.

9. Արդյոք Հաշմանդամ անձնաց կրթության մասին օրենքը պահանջում է, որ դպրոցական համայնքները քայլեր ձեռնարկեն՝ երաշխավորելու, որ այն աշակերտների համար, ովքեր հատուկ կրթության համար իրավունակ են, արտադասարանային պարապմունքները հասանելի կլինեն:

Այո, Հաշմանդամ անձնաց կրթության մասին օրենքը (IDEA, Individuals with Disabilities Education Act) պահանջում է, որ դպրոցական համայնքները և այլ հանրային գործակալություններ երաշխավորեն, որ յուրաքանչյուր հաշմանդամ աշակերտ լրացուցիչ աջակցություն և ծառայություններ է ստանում՝ որոշված երեխայի Անհատականացված կրթական ծրագրի (IEP, Individualized Education Program) թիմի կողմից, որը համապատասխան և անհրաժեշտ է երեխայի համար՝ մասնակցելու ոչ կրթական գործունեությանը:¹¹

10. Թե՞ թե արթնտիկան և այլ ոչ ուսումնական և արտադասարանային պարապմունքները պետք է հասցեագրվեն՝ աշակերտների IEP-ներում:

Եթե աշակերտն իրավունակ է հատուկ կրթության համար և հատուկ կրթության, կապակցված ծառայությունների և/կամ լրացուցիչ աջակցությունների, ծառայությունների և այլ աջակցությունների կարիք ունի՝ երեխայի եզակի կարիքները բավարարելու համար, այնպես որ այդ երեխան կարողանա մասնակցել ոչ ուսումնական կամ արտադասարանային պարապմունքներին, ապա այդպիսի ծառայությունները և աջակցությունները պետք է ներառվեն աշակերտների IEP-ում:¹² Եթե մարզիչը կամ ծրագրի ղեկավարը որոշի, որ այդ երեխան որևէ նման ծառայության կամ աջակցության կարիք չունի կամ այդ փոփոխությունները կարող են կատարվել արտադասարանային ծրագրում, որպեսզի երեխան կարողանա մասնակցել,

¹¹ 34 CFR հոդված 300.117

¹² 34 CFR հոդված 300.320.(a)(4)

ապա կարիք չկա, որ երեխայի մասնակցությունն անպայման ներառվի IEP-ում:

11. Մարմնամարզության մարզիչները կարո՞ղ են IEP թիմի անդամ լինել:

Այո, ամեն ոք, ով երեխային վերաբերող տեղեկություններ ունի, կարող է թիմի անդամ լինել: Եթե երեխան ծառայությունների կամ աջակցության կարիք ունի կամ նպատակներ ունի՝ մարմնամարզության մասնակելու հետ կապված, ծնողը կամ դպրոցական համայնքի ներկայացուցիչները պետք է մարզիչին հրավիրեն՝ մասնակցելու IEP-ի կազմմանը:

12. Ի՞նչ տեսակի կապակցված ծառայություններ, լրացուցիչ օգնություն կամ այլ աջակցություն տրամադրելու համար են պատասխանատու դպրոցական համայնքները, որպեսզի երաշխավորեն, որ մտավոր առողջության հաշմանդամություն ունեցող աշակերտները կարող են մասնակցել արտադասարանային պարապմունքներին:

IEP թիմը ի նկատի կունենա ցանկացած կապակցված ծառայություն, լրացուցիչ օգնություն կամ այլ աջակցություն, որոնք անհրաժեշտ են՝ բավարարելու երեխայի եզակի կարիքները: Մտավոր առողջության կարիքներ ունեցող երեխաների համար սա կարող է ներառել, բայց չսահմանափակվել հետևյալներից մեկով կամ մի քանիսով՝ դրական վարքի աջակցման ծրագիր, որը ծրագրված է վարքագծերին անդրադառնալու համար, խորհրդատվություն՝ ուսուցանելու դիմադրել կամ սոցիալական հմտություններ, որոնք կապված են մրցակցության կամ թիմի գործունեության հետ, հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ՝ վարժանքների ժամանակ ընդօրինակելու և ուսուցանելու վարքագծի հմտություններ, մարզիչի ցուցումների փոփոխություններ, որոնք կարող են ներառել կրկնություն, բարդ ցուցումների մասնատում՝ անհատականացված ցուցումների կամ մարզումների տրամադրում՝ հմտություններն ամրացնելու համար, հաճախելիության վերաբերյալ կանոնների փոփոխություններ վարժանքների

Ժամանակ, որպեսզի աշակերտները կարողանան գնալ բժշկական այցելություններին:

13. Դպրոցական համայնքներից պահանջվո՞ւմ է հաշմանդամ աշակերտներին թույլ տալ մասնակցել որևէ մրցակցային գործունեության՝ անկախ աշակերտի համապատասխան հմտություններից կամ ունակություններից:

Ոչ: Դպրոցական համայնքները կարող են աշակերտի հմտության կամ ունակության մակարդակ պահանջել, որպեսզի այդ աշակերտը մասնակցի ընտրովի կամ մրցակցային ծրագրի կամ գործունեության: Դպրոցական համայնքները, սակայն, պետք է իրավունք ունեցող հաշմանդամ աշակերտներին հավասար հնարավորություններ ընձեռեն՝ մասնակցելու թեթև աթլետիկայի արտադասարանային պարապմունքներին՝ ներառված ձևով՝ յուրաքանչյուր աշակերտի կարիքին համապատասխան առավելագույն չափով: Սա նշանակում է, որ դպրոցական համայնքը պետք է անհատականացված հարցում անցկացնի՝ որոշելու, թե արդյոք աշակերտն իրավունք ունի մասնակցելու մրցակցային պարապմունքներին՝ դրանց քաղաքականություններում, գործընթացներում կամ ընթացակարգերում՝ պատշաճ հարմարեցումներով կամ փոփոխություններով կամ առանց դրանց:

14. Ինչպե՞ս է դպրոցը որոշում, թե արդյոք փոփոխությունը կամ հարմարեցումը պատշաճ է:

Եթե փոփոխությունը կամ հարմարեցումն անհրաժեշտ է հաշմանդամ երեխային արտադասարանային պարապմունքի ժամանակ հավասար հասանելիություն տրամադրելու համար, սովորաբար փոփոխությունը կամ հարմարեցումը համարվում է պատշաճ, եթե դպրոցը չի կարող ապացուցել, որ հայցված փոփոխությունը իրենից արտադասարանային մարմնամարզական պարապմունքի բնույթի հիմնական փոփոխություն է ներկայացնում կամ

աշակերտին անագնիվ առավելություն է տալիս՝ մյուս աշակերտների նկատմամբ:¹³

15. Ի՞նչ պետք է անի կրթական գործակալությունը՝ անհատականացված հետազոտություն կատարելու համար:

Քաղաքացիական իրավունքների գրասենյակը վերջերս պարզաբանել է, որ անհատականացված հետազոտությունը դպրոցի՝ համապատասխան գիտելիքներով և փորձառություն ունեցող աշխատակազմից պահանջում է ժամանակին արված, պատշաճ, լավ վստահության ջանքեր՝ որոշելու, թե արդյոք կան պատշաճ փոփոխություններ կամ օգնություններ կամ ծառայություններ, որոնք աշակերտին արտադասարանային պարապմունքներում հավասար մատչելիություն կտրամադրեն:¹⁴

16. Դպրոցական համայնքներից պահանջվո՞ւմ է քայլեր ձեռնարկել, եթե որևէ աշակերտ հետապնդման է ենթարկվում հաշմանդամության պատճառով՝ արտադասարանային պարապմունքներին մասնակցելիս:

Այո: Դպրոցները պետք է քայլեր ձեռնարկեն վերացնելու հաշմանդամության վրա հիմնված հետապնդումը, որի մասին դպրոցը գիտի կամ տրամաբանորեն պետք է իմանա, ներառյալ այն հետապնդումը, որը տեղի է ունեցել արտադասարանային պարապմունքի ժամանակ: Սա ներառում է անհապաղ, մանրակրկիտ և անկողմնակալ հետաքննում՝ անհապաղ քայլեր ձեռնարկելով՝ վերջ տալու հետապնդմանը և դրա ազդեցություններին և կանխելու

¹³ OCR Հարգելի գործընկերոջ նամակ՝ թվագրված 2013թ. հունվարի 25-ին: <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201301-504.pdf>.

¹⁴ OCR նամակը Ֆրանցիսկո Նեգրոն Կրտսերին http://chinniandmeuser.com/uploads/3/2/7/4/3274563/december_2013_ocr_clarification_re_separate_athletic_opportunities.pdf.

հետապնդման կրկնությունը, ինչպես նաև հետապնդման ենթարկվածին հակադարձ գործողություններից պաշտպանելը:¹⁵

17. Արդյո՞ք հավասար հնարավորություն նշանակում է, որ յուրաքանչյուր հաշմանդամ աշակերտ երաշխավորված է տեղ ունենալ մարմնամարզական թիմում, մինչդեռ մյուս աշակերտները պետք է քննություն հանձնելով ընտրվեն:

Ոչ: Դպրոցական համայնքները պետք է սակայն հավասար հնարավորություններ ընձեռեն որակավորված հաշմանդամ աշակերտներին՝ մասնակցելու թեթև աթլետիկայի արտադասարանային պարապմունքներին՝ ներառված ձևով՝ առավելագույնս համապատասխանեցնելով յուրաքանչյուր աշակերտի կարիքի հետ: Սա նշանակում է, որ դպրոցական համայնքը պետք է իր քաղաքականություններում, գործելակերպերում կամ ընթացակարգերում պատշաճ փոփոխություններ կատարի, երբ որ նման փոփոխություններն անհրաժեշտ են՝ հավասար հնարավորություններ երաշխավորելու, եթե դպրոցը չի կարող ապացուցել, որ հայցված փոփոխությունը իրենից արտադասարանային մարմնամարզական պարապմունքի բնույթի հիմնական փոփոխություն է ներկայացնում կամ աշակերտին անազնիվ առավելություն է տալիս՝ մյուս աշակերտների նկատմամբ:

18. Դպրոցական համայնքը կարո՞ղ է ապավինել միջդպրոցական ֆեդերացիայի կանոններին կամ պահանջներին կամ այլ մարմնամարզական միավորումների, կազմակերպությունների, ակումբների կամ միությունների, որոնց պատկանում է դպրոցը՝ հաշմանդամության վրա հիմնվելով աշակերտին

¹⁵ Տե՛ս Հարգելի գործընկերոջ նամակը՝ թվագրված 2010թ., հասանելի է՝ <http://www.ed.gov/ocr/letters/colleague-201010.html>.

արտադասարանային պարապմունքից դուրս հանելու համար:

Ոչ: OCR-ը պաշտոնապես հայտարարել է, որ դպրոցի իրավական պարտականությունը՝ համապատասխանելու դաշնային հակախտրականության օրենքներին, գերակայում է որևէ միավորման, կազմակերպության, ակումբի կամ միության որևէ կանոնի նկատմամբ, որը կանխում կամ սահմանափակում է մասնակցությունը՝ հիմնվելով հաշմանդամության վրա:¹⁶ Դպրոցները պետք է հավասար հնարավորություններ ընձեռեն հաշմանդամ աշակերտներին՝ անկախ նման կանոններից և պետք է աշխատեն ցանկացած միավորման հետ՝ երաշխավորելու, որ հաշմանդամ աշակերտներին չեն խոչընդոտում հավասար հնարավորություններ ունենալ՝ մասնակցելու թեթև ատլետիկայի միջոցակցական միջոցառումներին:¹⁷

CalMHSA –ի կողմից իրականացվող կանխարգելման և վաղ միջամտության ծրագրերը ֆինանսավորվում են վարչաշրջանների կողմից՝ քվեարկողի կողմից հաստատված Հոգեկան առողջության ծառայությունների օրենքի միջոցով, (դրույթ 63) (Mental Health Services Act, Prop. 63): Դրույթ 63-ը տրամադրում է այն ֆինանսական միջոցները և շրջանակը, որն անհրաժեշտ է ընդլայնելու հոգեկան առողջության ծառայությունները՝ նախապես բավարար ծառայություններ չստացած բնակչությանը և Կալիֆորնիայի բազմաբնույթ համայնքներին:

Մենք ցանկանում ենք Ձեզ հետ կապի մեջ լինել: Այս ամփոփաթեթերը կարդալուց հետո խնդրում ենք այս կարճ հարցումը լրացնել և ներկայացնել մեզ Ձեր կարծիքը:

Անգլերեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

¹⁶ OCR Հարգարժան գործընկերոջ նամակը, թվագրված 2013թ. հունվարի 25-ին: <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/letters/colleague-201301-504.pdf>.

¹⁷ Id.

Իսպաներեն տարբերակ՝

<http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

Disability Rights California-ն ֆինանսավորվում է մի շարք աղբյուրներից. ֆինանսավորողների ամբողջական ցանկի համար անցում կատարեք՝ <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.

Կալիֆորնիայի հոգեկան առողջության ծառայությունների մարմինը (CalMHSA, California Mental Health Services Authority) վարչաշրջանների կառավարման կազմակերպություն է, որն աշխատում է բարելավել հոգեկան առողջության արդյունքները՝ անհատների, ընտանիքների և համայնքների համար: Կանխարգելման և վաղ միջամտության ծրագրերը, որոնք իրականացվում են CalMHSA-ի կողմից, ֆինանսավորվում են վարչաշրջանների կողմից՝ քվեարկողի կողմից հաստատված Հոգեկան առողջության ծառայությունների օրենքի միջոցով (Mental Health Services Act (դրույթ 63): Դրույթ 63-ը տրամադրում է այն ֆինանսական միջոցները և շրջանակը, որն անհրաժեշտ է ընդլայնելու հոգեկան առողջության ծառայությունները՝ նախապես բավարար ծառայություններ չստացած բնակչությանը և Կալիֆորնիայի բազմաբնույթ համայնքներին:



WELLNESS • RECOVERY • RESILIENCE

